ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (*Կ-905-29.08.2024-ԱՊՀ-011/0)* օրենքի նախագծի նախնական քննարկման համար ներկայացված **բանավոր** առաջարկների

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Նարեկ Զեյնալյան	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (*Կ-905-29.08.2024-ԱՊՀ-011/0)* օրենքի նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածով գործող օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասում լրացվող նոր «Հիվանդանոցային պայմաններում որոշ տեսակների բժշկական օգնության եւ սպասարկման իրականացմանը ներկայացվող պահանջները՝ ըստ մակարդակների, սահմանում է լիազոր մարմինը:» նախադասության մեջ **հստակեցնել** «որոշ» բառի իմաստը: **Առաջարկում եմ՝** Նախագծի 1-ին հոդվածով գործող օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Հիվանդանոցային պայմաններում ~~որոշ տեսակների~~ բժշկական օգնության եւ սպասարկման իրականացմանը ներկայացվող պահանջները՝ <u>ըստ տեսակների</u> և մակարդակների սահմանում է լիազոր մարմինը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: